Ների ինտերվենցիոնիստական սայլին, ավելի քան յերբեք վճռապես փարելով բուրժուազիայի տիրապետությունն ինտերվենցիայի ճանապարհով հաստատելու գաղափարին և ամենաջերմ մասնակցություն հայտարերելով կովկասից և ընդհանրապես ի. Միությունից վոնդված եմիրդացիայում գտնվող հակածեղափոխական ուժերի կոնսոլիդացիայի գործին՝ Դաշնակցությունը միաժամանակ ավելի քան յերբեք լծվում է «գաղափարական» (կարդա ամենի ցառած պրակտիկ հակածեղափոխական Կ.Վ.) անհաջող պայքարից (Դաշնակցության 11-րդ ժողովի վորոշումներից) Հայաստանի ներքին կյանքում առհասարակ և զյուղում՝ մասնավորապես)։

Հիշենք, վոր պատմականորեն արդ ժամանակաշրջանը գուգաղիպում եր՝ ինչպես Խորհրդային ամբողջ Միության սահմաններում, նույնուրություն և Խորհրդային Հայաստանում գասակարգային պայքարի սրման շրջանին։

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական հատվածի առաջխաղացման տեմպի ուժեղացման ու մասնավորապես դյուզի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների ծավալումը հարվածներ են բերում մասնավոր կազմակերպության ելեմենտներին։ Այդ փասոք մասնավոր ԽՍՀՄ-ի և կապիտալիստական աշխարհի հակամարտության աճման պայմաններում, չեր կարող աննախընթաց կերպով չորել գասակարգային պայքարը դյուզում և քաղաքացիություն ։ Այս ընդհանուր փոնի վրա զծագրում են նաև այն նորը վոր մենք ունենք Դաշնակցության այս ըրջանի քաղաքականության և տակտիկայի մեջ։ Ավելի քան յերբեք Դաշնակցու-

թյունը «յերեսով դառնում ե» դեպի գյուղը, շատ հետեւ վաղականորեն այսուղ հանձին կուլակության տեսնելով այն միակ լուրջ հենարանը յերկրի ներսում, վորի հետ և պիտք ե կապի իր հակաֆորիքային բալոր ծրագրերի իրականացման գործը՝ հետագայում։

Այսաւելց ել այս ըրջանի դաշնակցական աշխատանքի գլխավոր լազունգներն եյին՝

ա) «Ապացուցել», վոր Հայաստանի ժողովրդական տնտեսության միակ ուղին՝ գյուղատնտեսությունն ե, և մասնավորապես՝ նրա այն ճյուղերի զարգացումը, վորոնք տանում են դեպի ինքնամփուխ տնտեսության ստեղծումը։

բ) «Յուց տալ», վոր Հայաստանի գյուղացին (կարդա կուլակը կ. վ.) կարող ե «առաջ» գնալ միայն այն գեղքում, յեթե ապահովվեն նրա տնտեսական ազատ զարգացման նախաձեռնության (կարդա կապի տալիստական զարգացման կ. վ.) անհրաժեշտ պայմանները։

գ) Ամեն կերպ պայքարել պրոլետարական պետության՝ գյուղի սոցիալիստական սլլանային վերակառուցման ձեռնարկումների դեմ, աշխատել առհասարակ «վնասակար» ցույց տալ պրոլետարական պետության ակտիվ դեկալար գերը գյուղի գործերում։

դ) Այս ամբողջ աշխատանքների ընթացքում չմոռնալ գժտություն սերմանել Անդրկովկասի յեղբայրական հանդրապետությունների մեջ «սահմանային և բյուջետային խնդիրներու» չուրջը, այս ճանապարհով չեղել աշխատավորական մասսաների ուշադրությունը և հրահրել ազգային կրքերը մի կողմից նորհրդային Հա-

յաստանի ու մյուս կողմից հարեվան յեղբայրական հանդրապետությունների՝ առաջին հերթին Վրաստանի և Աղբյուջանի գյուղացիության, քաղաքային մանր բուրժուազիայի և բանվորական հետամանց խավեռում։

Ընդհանուր այս Փոնի վրա բավական է միայն չառ հեռավոր ծանոթության կօնդրատյեվականության տեսության և պրակտիկայի հիմնական սկզբունքների հետ բացարձելու համար այն փաստը, թե մասնավորապես վերակառուցման շրջանում ինչո՞ւ այնպես անմիջական դարձավ կոնդրատյեվականների դորձակցությունը գաշնակցականների հետ ինչպես տեսության մեջ, նույնպես և պրակտիկայում։

Միայն մի քանի շրբիներ՝ հասկանալու համար Հայաստանի կոնդրատյեվականների այդ ըրջանի գործունեյության իրական իմաստը և նրա լիակատար համեմատության փաստը—Դաշնակցության սուրատեղիայի և տակտիկայի սպահանջներին։

1. ԶԱՐԴԱՑՄԱՆ Ի՞՞ՆՉ ՀԵՌԱՆԿԱԲԻՆԵՐ ՈՒՆԻ ԽՈՐՀԸ ՀԵՐԴԱՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Այս խնդիրը պակաս չափով չի «կրագեցրել» նաև Հայ կոնդրատյեվականներին, բայց համեմատության նպատակով, նախ տեսնենք թե ինչ տեսակետներ են զարդացրել այս հարցում դաշնակցականները վերջին շրջանում։

Ամելով, թե Հայաստանում դժբախտաբար ավյալներ չկան արտակրական միջոցներ արտադրող արդյունաբերության համար, մենք պարզում ենք տնտեսական

իրականության պատկերը, վոր յենթակա չի քրանաստեղծության»^{*)})

Աններելի սխալ կլիներ դաշնակցական գրչակների այս դրույթը բացատրել սոսկ նրանց «ոռնտեսական մտքի» նախատեսելու անընդունակությամբ:

Ամբողջ խնդիրն այստեղ կայանում է նրանում, վոր խոսելով «արտադրական միջացների արտադրող արդյունաբերության» խսպառ բացակայության և նրա դարդացման հնարվորությունների չգոյության մասին՝ դաշնակցականները վճռական քայլ ֆյին կատարում հետագայում հիմնավորելու համար այն միտքը, վոր «Հայաստանի ժողովրդական տնտեսության հիմքը գյուղն և և գյուղատնտեսությունը»։ Հայստանի կոնդրատեականները բոլոր հիմքերն ունեյին առանձին վոգեորությամբ վորդեղբելու «ամեն ինչ գյուղատնտեսության համար, ամեն ինչ գյուղին» լոգունգը։

Զե՞ վոր գյուղի անհատական տնտեսավարության պայմաններում այդ պետք է ոժանդակիր «տոհասարակ» գյուղի զարգացմանը, վերջին հաշվով ուժեղացնելով մեր սոցիալական բազման, վոր միակ լուրջ նենարանն եք մեր եկամումիկայի կապիտալիստական վերսակրիստում բոլոր ձգտումների համար։

Այս տեսակետից չափաղանց բնորոշ է Հայտստանի կառավարության ներկայացված մեկ այլ զեկուցադիր, վորի մեջ կոնդրատեական Ա. Քալանթարը նոր յեղանակով յերգում է միշտ չին կոնդրատյելիյան յերգը։ Լունը նրան։

Իր զեկուցադրում գյուղատնտեսության հետամիա-

ցության պայմանների մասին Հայտստանում Ա. Քալանթարը գրում ե.

«Հայաստանում պետական յեկամուտների ամենագլխավոր աղբյուրները պետք ե փնտուել զյուղատնտեսության մեջ, վորովհետև հանրապետության մեջ շատ քիչ են այլ հարառություններ, իսկ ունենալու դեպս յերեկան ել, դեռ չեն հայտարերվել։ Իսկ ունենալու զյուղական ազգաբնակության ինտենսիվ դաշտագործությունից և մթերատու անանտառուծությունից ստացվող բարձր յեկամուտները կազմում են պետական հարցադրության հիմքը։ արդյունաբերությունն ևս կարելի յեստեղծել և պահպանել, յերե ազգաբնակության մասները գնողունակություն ունեն»։

Մայիս 1928 թ.

Ա. Քալանթարի այս մտավոր զեղումների խոկական պատկերը լիակատար կդառնա, յեթե մենք ավելացնենք, վոր անառնաբուծության «պրոբլեմի լուծման նվիրած» իր բավական «ապատկառելի» զեկուցադրում ընթերցողը և վոչ մի բառ չի կարող գտնել անասնապահության վերակառուցման և զարգացման սոցիալիստական ձեվերի մասին, իսկ զեկուցադրի վերջում հեղինակի միակ առաջարկն է 50-ից 100 հոգի յերթասարդ անտեսատեր գյուղացիներ ընտրել Դանիա ուզգարկելու համար, ուր բաժանել նրանց առանձին տատեսատերերի վրա, պրակարիկ ձեվով գյուղատնտեսության «առաջավոր ձեվերին» ծանոթանալու սպատակով՝ յերկիր վերադառնալուց հետո «գործով պրոպագանդ մղելու համար»։^{*)}

Վորոնք են հեղինակի սպասելիքները այդ գյուղա-

*) О перспективах Развития животноводства А. К. Ֆлантар гр. 1—1928 г.

*) Վոր թե բառ այլ փաստ «Հուսաբեր» № 201—1930 թ.

*) „Пути развития с-х-ва“ Ст, Камсаракан стр. 46,

շիներից՝ «Ամենաշատը 5 տարի հետո... յերկիրը կըստանա 250 լավ պատրաստված գյուղացիներ, վորոնչ կատեղնեն կուլտուրական ռաջիններ (Կոնդրատյեվյան Լեկսիկոնի ամենալավունաված տերմինը՝ «Իռւլակային բառը փոխարինելու համար Կ. Վ.) և անձնական որինակ կիանդիսան» : (Նույն տեղ էջ 10) :

Մենք թողնում ենք, վոր այս ամենից ինքն ընթերցողը աներաժեշտ յեզրակացություններ եածի :

2. Մեր հոգվածներից մեկում արգեն առիթ ենք ունեցել մատնանշելու, թե ինչպես են զնում գյուղատնտեսության զարգացման խնդիրը կոնդրատյեվյանները Բերենք մի նոր նմուշ ևս այդ մտավոր զեղումներից :

Կոնդրատյեվյականների կարծիքով՝ նախ գյուղատնտեսության սլլանը հանդիսանում և «ամենից անկախ փոփոխելի» և ապա՝ այդ պլանը պետք և կառուցված լինի յերակետ ունենալով՝

1) «Զարգացնել մեր գյուղացիական աղքարնակության ինքնառողծունելությունը և բարձրացնել նրա տնտեսական նախաձեռնությունը. 2) առահօգել գյուղատնտեսության մեջ նյութական արժեքներ կուտակելու պարմաններ»*) :

Յույց տալու համար, թե ինչպիսի հմտությամբ այս հարցում ևս կոնդրատյեվյականներն իրական արտահայտիչն են հանդիսացել զաշնակցական «տեսարանների», անհրաժեշտ ե ծանոթանալ, թե վորոնք են հանդիսացել գաշնակցական մոքեն և պրակտիկայի ուղղեցույցն այս հարցում :

«Թե տնտեսության և քե մշակույթի հառաջադիր»
*) „Путь развития сельского хозяйства“, сг. Камсара на стр. 46

մուրյունը նախ և առաջ պահանջում ե մարդու և ֆարմացու (կարգա՝ գյուղի և քաղաքի բուրժուազիայի. Կ. Վ.) ազատություն (Հնդկացումն հեղինակինն ե) : Այդ և պատճառը, վոր մենք ընդունելով հանդերձ շինարարության փասուը, ամեն կերպ պայքարում ենք խորհրդացին տնտեսական քաղաքականության դեմ:*)

Մենք կարող ենքնք բավականանալ այս համեմատություններով, յեթե կարենք չինքը ցույց տալ, վոր՝ կոնդրատյեվյականների աշխատանքները գործնականում ևս նույնպիսի հետեղողականությամբ դրսեվորել են անտեսական շինարարության ոլրակտիկայում առաջին հերթին դաշնակցական քաղաքականության առորյայի պահանջները :

3. Հայաստանի կոնդրատյեվյականների տեսական և սրակտիկ աշխատանքներում շատ կարելի յե գտնել Հայաստանի կուլակության և Դաշնակցության հականդատիստական պայքարի դուարներ՝ ուղղված բամբակի գեմ մասնավորապես բամբակի արտադրության և վահառահանման գործի պետական կարգավորման ծեռնարկումների դեմ:

Սակայն այս անդամ մենք ուզում ենք դիմել մի քանի այլ բնույթի գոկումենտների :

Մեր տրամադրության տակ ե ՀՍԽՀ Պետպլանի նախագահության հասունկ հանձնաժողովի նիստերից մեկի արձանագրությունը, վորը տեղի յե ունեցել 1929 թ. մարտի 16-ին ընկ. Խ. Հովսեփյանի նախագահությամբ և նվիրված և ժողովրդական տնտեսության առողջին յեռամսյակի կոնյուկտուրայի քննությանը :

**) Դրուակ № 11-1928, Աշուա Արծրունի.

Այդ արձանագրության մեջ ի միջի այլոց կարելի յի կարդալ`

Յ. Բամբակի արտերի նվազեցված տարածությունը պահպանելու (!!) նպատակով, ընկ. Մանասերյանն առաջարկում է ուժեղացնել հացի ներմուծումը քամբակագործական շրջանները՝ գարևանացան պահին հացամբերքի գիմն իշեցնելու համար։

«Ընկերներ քաչարյանը, Վերմիշել Հարությունյամը, (ինչ ծաղկափունջ են Կ. Վ.) հաստատում են այդ առաջարկը ընդգծելով, վոր քամբակի ու հացահատիկի եկվիվալենտն անհամապատասխան է, վոր գեների տվյալ կոնյուկտուրի պայմաններում գյուղացիների համար տնտեսապես ձեռնուն չեն տնտեսության բամբակագործական ուղղությունը։ (Ընդգծումն ինս է Կ. Վ.)»

Մենք չգիտենք վորեւ հակահարված ստացե՞լ եւ արդյոք բամբակի «կրնաված տարածությունը պահպանի ցանկացող» և այն հիմնավորող Հայաստանի կոնդրատյեվականների այս «խմբական» յելույթը, թե բացարակ ոպորտունիստական հանդուրժողական վերաբերունենի հանդիպել այդ նիստին ներկա գոտիսող կոմունիստ ընկերների կողմից։

Սակայն կարող ենք լիովին հավաստել, վոր այդ յելույթն ամբողջովին արտահայտում է Դաշնակցության պայքարի կվինտեսենցիան և Հայաստանի կուսակության լրիվ ցանկությունները՝ բամբակի հարցում։

Գ. Գյուղի սոցիալիստական վերակառուցումը՝ զուգոր զգում եւ ամբողջ շարք պրոցեսներով։ Բանվոր դասա-

կարգը պետք է կարողանար վոչ միայն ընդգրկել այդ պրոցեսները, այլև ակտիվ կերպով ներազգել և յենթարկել նրանք իր ընդհանուր քաղաքականությանն ու նորատակագրումներին։ Այս խնդրի լուծումն առաջակցվելու համար պահանջվող լրացուցիչ քաղաքական տնտեսական և կազմակերպչական նախարարյաներ ստեղծելու նպատակով եր, վոր այսպես վճռականորեն մեր կուսակցության 16-րդ համագումարը յելակետ ընդունեց, թե «Երջանենք իրապես պետք եւ վերածել կուսակցության խաղաքականությունը գյուղում գործնականապես իրականացնելու համար յաջին ողակների»։ (16-րդ կուսամատդ. վորոշումից)։

Անկասկած, ինչպես ամենուրեք, նունակես և Հայաստանում կոնդրատյեվականների (և վոչ միայն նրանց) չի կարող դուր գալ այդ վորոշումը։ Դեռևս մինչև ըրջանացումը Հայաստանի կոնդրատյեվականներն ահազին «տեսական» մարզանքներ են կատարել՝ ցույց տալու համար ըրջանացման յեռաստիճանն սիստեմինպատճեն համարմարությունը յերկաստիճանի (ըրջան, կենտրոն) հանդեպ։ Վերջերս Հայաստանի ըրջանցման հանձնաժողովի նախակին նախագահ Գ. Քոչարյանի ստուգման ընթացքում պարզվեց, վոր նա «մինչև այսոր եւ մնում է այն կարծիքին, թե մեղանում» «կադրերի պակասության և վարչապետության» ավելի նորատակահարմար և յեռաստիճանն սիստեմը։ Կոնդրատյեվականները չառ հետեղականուրեն պետք է աշխատելին քուլացնել և չեզոքացնել նոցիալիստական բարաքի և ընդհանրապես պրոլետարիան պիտության ակտիվ, ամսիջորեն ներազդող դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։

Այդ տեսակետից մենք վոչինչ «հոր» չենք տեսնում
Գ. Քոչարյանի դիրքի մեջ:

Այդ և պատճառը, ահա, վոր արտաքինից պաշտո-
սանելով «ռայոնացման աշխատանքը պլանագործման
գործին ի սպաս զնելու սկզբունքը», իրականում նրանք
դարձացրել են մի «տեսություն», վորը խղճի մոռք կա-
րող ելին վորդեգրել բոլոր տիզի ու գույնի ցարական
միջնորդները և Դաշնակցական «լարչաղետներն» այ-
սորվա պայմաններում:

Բաժանման յերկաստիճան սխեման իշականացվելու
դեպքում (մենք յերկու սխեմից ել բացառում ենք գյուղ
խորհուրդները, վորսես փոքր և տնտեսական ու վար-
չական տեսակետից դեռևս չձևակերպված միավորներ) Հայաստանի պայմաններում, մոտ 15-20 շրջան չեն
կարող (!!) ընդգրկել յերկրի տնտեսական հիմնական
մասսիները, հետևազն չեն կարող տալ քիչ քե շատ
աժքեքափոք կերպով մշակված շրջանային (լայն իմաս-
տով) հեռանկարային նյութեր և ընդհանրապես չափա-
զաց քույլ են պլանային աշխատանքի համար»*):

Հայանի յեւ, վեր յեռաստիճան բաժանման այս
«սկզբունքից» յեւնելով եւ շրջանացման հանձնաժողովը
Գուրգեն Քոչարյանի և Արշավիր Կամսարականի «Հան-
քերով» (կրտսեր յեղբայրը «Հայ տեղի» գովերդու Ստ.
Կամսարականի) կազմել և քննության եր ներկայացրել
նախկին հինգ գավառային նախադիմք, վորս՝ ի դեպ
հետեւալ կերպ եր գնահատվում իր ժամանակին դաշ-
նակցականների կողմից.

«Համեմատած նախկին ինն գավառային վարչական
դրության հետ՝ ներկա նախադիմքն իհարկե մի քայլ և

*) „Районирование ССР Армении,” докладная записка
Ст. Камсаракана 3 июня 1928 г.

դեպի տուած: Փոքր միությունները վոչ միայն ծանր
րեռեն ժողովրդի վզին, իբրև վարչական մեծ ծախս
պահանջող կազմակերպություններ, այլ և անուժ են
անտեսական և մշակույթային լուրջ ձեռնարկումներ
անունուի բերելու» («Դրուչակ», № 12, 1928 թ., Հայաս-
տանի վարչական բաժանումը, Ս. Վարջյան):

Ինչպես տեսնում ե ընթերցողը, համահալասար
համաստքյամբ և միատեսակ փաստարկումներով դաշ-
նակիների ու Կոնդրատեվականներն աշխատում են «հիմ-
նավորել յեղատիճան» վարչական սխումի առավե-
լուրյունը և շտապում են ստորագրել հինգ գավառա-
յին ծրագրի տակ, բանի վոր ընդհանուր ու մեկ ե նաև
դրանց յեղակետը «ազատել գյուղը բայլշեվիկներու ան-
դրանց յեղակետը ազատել գյուղը բայլշեվիկներու ան-

5. Զավագանց զարմանալի կլիներ, վոր գաշնակ-
ցականները շրջանացման հարցի առընչությամբ ինդիր
շահանական հարցի առընչությամբ զավագանցականները մասին: Զե՞ վոր
չդնեյին «սահմանները վերանայելու» մասին: Զե՞ վոր
վարելով «ազգահավաքման» քաղաքականություն, դաշ-
նակցությունը մի կողմից իր ինտերվենցիոնիստու կան
վորումների համար «ազգային» հենարան և ստեղ-
ծում, մյուս կողմից ել ցանկանում է հայկական կապի-
տալի համար, պատրաստել տնտեսական գործունեցու-
թյան լայն առարկեղ: Այդ և պատճառը ահա, վոր իր
նույն հոգիվածում զաշնակցական Վարցյանը շարունա-
կում է:

«Դրական ե մեր կարծիքով և Պետականի այն ակ-
սակետը, վոր վարչական բաժանումներ կատարելիս
չպետք ե ղեկավարվել պատմական նկատառումներով,

այլ՝ կյանքի իրական սրահանջներով։ Յեվ իհարկե այս գեղգում իրական պայման և ժողովրդական տնտեսության զարգացման ապահովությունը բայց նախ՝ դրան չի կարելի հասնել միայն արտադրական կենտրոններ ստեղծելու ծրագրով։ յերկրորդ՝ միայն ժողովրդական տնտեսության մտահոգությունները բավական չեն սահմանների գծման խնդրում։ Մեղ մոտ կան մի շարք նույնպես երական պայմաններ՝ յերկրի ազգադրական կազմը, աշխարհագրական դիրքը, կլիմայական հանդամանքները, հաղորդակցության միջոցները, տնտեսական ձգումը և այլն» (նույն տեղ, էջ 309)։

Դաշնակցական մի այլ «քաղաքագետ», նույն «Դրոշակի» եջերում կոնկրետացնելով «վարչապետ» Վարդյանի տեսչանքները, յերգում ե. — «Միակ արդար և լեհինյան (!!) դավանաբանության ել համապատասխան կարգադրությունը կիներ՝ Ախալքալաքի միացումը Հայաստանին կամ ծայրահեղ գեղգում ինքնավարությունը» : («Անդրկովկասի շրջանացումը», Ս. Մասուրյան, »Դրոշակ« №6-7, 1929 թ., յերես 116)։

Հարց կարող ե ծագել՝ Հայաստանի կոնդրատյեվականները տվօնել են արդյոք իրենցից սպասվող տուրքը Դաշնակցությանը՝ նաև այս գծով։

Մենք միակատար համոզումով դրական դատասխան ենք տալիս այս հարցին։ Յեվ այս նպատակով Հայաստանի կոնդրատյեվականներին անհրաժեշտ եր նախ և առաջ «ապացուցել», վոր շրջանացման դործը՝ դա նախ և առաջ... առանձին հանրապետությունների (կարդահայերի և Հայաստանի) սեփական դործն ե։

«Մենք կարծում ենք, վոր շրջանացման աշխատանքների այն նոր ուղղությունը, վոր ընդունել և Անդրհանձնաժողովը (ԱՄֆէշ-ի շրջանացման թէ սին-

տետիկ և թէ անալիտիկ աշխատանքների ուրվագծումը) չի կարելի ընդհանիրապես նիշտ համարել։ Ժողովրդական տնտեսության սխտեմների տարածական բաշխման հայտաբերումով նախ և առաջ շահազրպված են առանձին հանրապետություններ, վորովհետեւ դա այն հիմքն ե, վորի վրա միայն հնարավոր և սացիոնալ կերպով կառուցել հանրապետությունների և նրանց որգանների տնտեսական գործունեյությունը» :*)

Ընթերցողի համար ինչքան ել ձանձրակի չլինի գաւնակցականների մտալոր «զեղումները», այնուամենայնիվ մենք անհրաժեշտ ենք համարում այս առթիվ, համեմատության նպատակով, բերել դարձյալ գաւնակցականների կարծիքը նույն խնդրի առթիվ։

«Մա այն հարցերից ե, վորոնք ահազին նշանակություն ունեն Հայաստանի զարգացման համար և չպետք ե անցկացվեն հապճեպ, նեղ կուսակցական նկատառումներով, այլ բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո, յելակես ունենալով միայն հայ ժողովրդի և Հայաստանի անկաշկանդ գարագիտական պայմանների ապահովությունը» («Դրոշակ», էջ 307, Վարդյան)։

Սակայն հարց և ծագում, Հայաստանի կոնդրատյեվականներն ի՞նչպիս են զրել «Հայ ժողովրդի անկաշկանդ զարգացման» հարցը շրջանացման կատակցությամբ։

«Մեր յերկրի մակերեսի ձեվն իսկ, վորը հիշեցնում և պահպան կուժի պատկերը, չափազանց անհարմար և շրջանացման համար, վորի համար իդեալական ձևն և ըրջագիծը»**)

*) А. Камсаракан «О ходе работ комиссии районирования при Госплане ССРС» докл., записка

**) А. Кочарян «проблемы Районирования» (Эк. Вестник ССРС—28 г. М 3-15 էջ 9.)

ԱՌԵ Հղիտենք, թե ըրջանացման գործում վճռի շկոլային և պատկանում այն «տեսությունը», վորի համաձայն չի կարելի պատկած կուժի» ձեվ ունեցող տերիտորիայում ըրջանացման աշխատանքներ կատարել։ Սակայն մեր խոր համոզմունքով այդ «շկոլան» ստեղծում են Հայաստանի կոնդրատյեվականները՝ «Ախալքալաքի և Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորումը» «Հիմնավորելու» նպատակով։

Այդ նպատակով՝ մի այլ կապակցությամբ՝ Հայաստանի ըրջանացման գործի յերկրորդ տեսաբանը (և վոչ միայն «տեսաբանը»), վորն և զեպ՝ չի մոռամում աջ ու ձախ ռեվերանսներ անել արտադրական սկզբունքի հասցեյին ըրջանացման գործում՝ հետեւյալն և գրում։

«Անդրկովկասի ժողովուրդները յերկրում քնակուրյան են հաստատել այնպէս, վոր վոչ միշտ հնարավոր և լինում գուգակցել աղջային խմբերի սահմանները^(*) տնտեսականի հետ, վորը հարցի իդեալական լուծումը կլիմեր»*):

Այս բոլորից հետո թվում ե, վոր Վրացյանի հանդիմանությունը Հայաստանի կոնդրատյեվականների հասցեյին՝ խոպառ անհիմն է։

Խորհրդային մամուլում և կառավարական ու պլանային մարմինների գեկուցագրերում արտահայտվելու հնարավորության սահմաններում Հայաստանի կոնդրատյեվականներն ամենայն բարեխզծությամբ աշխատել են «հիմնավորել» Դաշնակցության արխիշալինիստական, արկածալինդիր բարտիկանության բոլոր առաջադրանքները՝ նաև սահմանային խնդիրներու կարգավորմանը» ուղղությամբ։

Այն ամենը, ինչ մեզ հաջողվեց վեր հանել, բոլորովին անվիճելի յե կարձնում, վոր Հայաստանի կոնդրատյեվականներն իրոք վոր հանդիսացել են Դաշնակցության հակածեղափոխական դավերի ջատագովիը և երականացնողը մեր պայմաններում։ Սակայն անհերելի սիալ կլիներ այդ ամենից հանել այն յեղակացությունը, վոր կոնդրատյեվականների աշխատանքը մեզանում սահմանափակվել ե սովոր «տեղական» և «ոժանիակ» բնույթի խնդիրներով, զուրկ և յեղել այն վեպազնից», վոր ընդդրկել են նրանց ամբող ընկերները և. Միության այլ վայրերում։

Ամենեվին. չե՞ վոր պայքարելով՝ ասենք խորհրդային անտեսությունների նշանակության և գերի սահմանափակման նշանաբանով, Հայաստանի «սպեցիֆիկ պայմաններում» այդ տնտեսություններին ամբողջ հնդամյակի ընթացքում վերապահելով լավուածույն գեղքում «միմիայն ցուցադրական նշանակություն» (տես Հ. Փիրումյանի Կազմած գյուղատնտեսության հնդամյա պլանը) և կամ 5 հեկտարանոց կուլակային ոչախներ ինքններով նոր վառովկող շիշաններում (տես Ս. Կամսարականի գեկուցումը՝ Գյուղամուսում՝ զուրի տնտեսական հիմնավորման մասին)։ Վերջապես անհախընթաց համառ պայքար մղելով բարեկի ցամեմերի լայնացնան դեմ, (իսկ այդ նշանակության և անդրադային իշխանության անկախության դեմ, բամբակի գծով), Հայաստանի կոնդրատյեվականները հավատարիմ են մնացել իորիդային Միության կապիտալիստական վերասերման ակնկալությանը և ձգուելուն, իրենց ուժերը «ներածին չտի» ոժանդակել գյու-

զատնտեսության սոցիալիստական վերակառուցման միասնական ծրագրերը ձախողելու ընդհանուր նպատակին :

«Եորը» և առանձնահատուկը «Հայիրյան» կոնդրատյելվականների տակտիկայում այն է, վոր նրանք հանդիսանալով՝ Խ. Միության կապիտալիստական ռեստավրատորների ընդհանուր ողակի անբաժանելի մասնիկը, մեր կոնդրետ պայմաններում որյեկտիվորեն ունետք և միաժամանակ դառնալին հայկական բուժությալի և նրա կրոսակցության՝ Դաշնակցության կամակատարն ու նրա ինտերվենցիոնիստական ծրագրերի կենսագործողը մեր կյանքում :

Իսկ այդ փաստից պետք է, վոր անհրաժեշտ յեղացությունները հանվեն՝ «Հայրենական» կոնդրատյելվականության վասնդի սովորունիստական թերպնատման գեմ մեր զգաստությունն ու աչարջությունն սվելի ուժեղացնելու խմաստով :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՐԱԴՐԱՑՅԵՎՅԱՆ ՄԻ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում՝ մեր տնտեսական քաղաքականության պրակտիկայում կոնդրատյելվչինայի անդերի մերկացման տեսակետից մեր կարծիքով նախ և առաջ պետք է ճշտի՛ այն հարցը, թե Հայաստանում մենք գործ ունե՞նք կոնդրատյելվականության սոսկ առանձին, մեկ կամ մի քանի արտահայտությունների հետ, թե մեր պայմաններում ես նա հանդես և յեկել վորախ տնտեսական բաղականության տեսական և պրակտիկ ձեռնարկումների ընդլայնած ծրագիր, վորպես մեր տնտեսության առհասարակ և

մասնավորապես՝ կապիտալիստական գարգացման թերթին և պրակտիկ պաշտպանության ամբողջական սիստեմ :

Մենք պաշտպանում ենք յերկրորդ տեսակետը և մեր կարծիքով՝ կոնդրատյելվականությունը, վորպես ամբողջական սիստեմ, արտահայտություն և գոտել մասնավորապես յերկու աշխատանքների մեջ, վորոնք պատկանում են Պետպլանի գյուղատնտեսության սեկցիայի նախկին նախագահ (ներկայումս խորհրդական) Ստ. Կամուրականի գրչին և իրենց շապիկի վրա կրում են «ու ու պետական առողջապահությունը, ըստ յերեկույթին այն նպատակով, վոր անմատչելի ռարձնեն նրանց քննադատության հնարավորությունները :

Մեզ թվում է, սակայն, վոր ներկա գեղքում այն հանդամանքը, վոր քաղ. Ստ. Կամուրականը տարիներ շարունակ զլիսալորել և Պետպլանի Փյուղատնտեսական սեկցիան և մինչև այսոր ել այս կամ այն չափով մասնակցում է մեր զյուղատնտեսության պլանավորման և կարգության աշխատանքներին, միանդամայն ակընհայր և դարձնում այն փաստը, վոր նրա մտահղացումները, վորոնք արտահայտություն են գոտել, վորպես տեսակետների յրիվ սիստեմ, մեր մատնանշած յերկու աշխատանքներից՝ մասնավորապես «Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ուղիները» գործում, ունեն գերազանցավետ հասարակական-քաղաքական նշանակություն և վորպես այլպիսին հասարակական գնահատաժության ել պիտի արժանանան :

Այս հանդամանքից յելնելով և, վոր ներկա գեղքում մենք ավելի մեծ իրավունքով ցանկանում ենք «վորոնահարել» բուրժուական մորալի ըրջանակները և խորհրդային լայն հասարակության քննադատության

ներկայացնել մեր կյանքում կոնդրատյեվական տեսության և պրակտիկայի ամրողական որինակը հանդիսացող՝ Ստ. Կամսարականի այս աշխատությունն ու նըսանից յելնելով՝ մի քանի յեղբակացություններ անել կոնդրատյեվականության դեմ մեղանում մղվագ և մղվելիք պայքարի գործնական մեթոդների մասին։

Բավականաչափ հանրածանրթ ե արդեն, վոր կոնդրատելյան տնտեսական քաղաքականության մեթոդությական հիմունքները գերազանցապես կառուցված են մեր եկոնոմիկայի ուղղութանորի «յուրահատուկ» ըմբռնման, պլանային և շուկայական տեսդենցների փոխարարելության մեխանիկական վերլուծության վրա։

Պրոլետարական պետության վարած տնտեսական քաղաքականության նպատակաշրջումների լույսի տակ՝ իր եյությամբ ամբողջովին ուեկցիոն այս տեսությունը մասնավորապես ժխտում է արդյունաբերության դեկալար դերը գյուղատնտեսության հանդեպ, յինում է զյուղատնտեսույան հասուլ ներքին ինքրացիայի ուժով «ինքնուրույն և անկախ» զարգանալու դրույթը։

Ստ. Կամսարականը Հայաստանի գյուղատնտեսության զարգացման իր տեսական կոնցեպցիայի և գործնական յեղբակացությունների ամբողջ սիստեմը կառուցում է հենց այս հիմքի վրա։

«Նախ և առաջ անհրաժեշտ է մտանանչել, վոր յեթե անցյալում, մինչպատճերազմյան շրջանում, գյուղատնտեսության աստիճանական զարգացումը վորոշող ուղղություն է ունեցել, վորը (ուղղությունը) արտա-

հայտվել է նաև տնտեսական նոր քաղաքականության հաստատվելուց հետո սկաված գյուղատնտեսության վերականդման նոր պրոցեսում, ապա ակնհայտ է, վոր առտիճանական զարգացման այդ ուղղությունը բավականաչափ խորը և հիմնական պատճառներ ունի։ Ուստի ակնհերեվ է, վոր գյուղատնտեսության զարգացման ունի ներգործման վորոշ ներքին ուժ։ Հետևապես գյուղատնտեսության հետագա աստիճանական զարգացումը հաջիկ առնելիս, մենք պետք է լրջորեն նկատի առնենք ներգործման այն ուժի ուղղությունը, վերը գյուղատնտեսության զարգացման մեջ*): (Ընդդուռն իմս ե Կ. Վ.)

Հարցի այսորինակ դրվածքն իր մեջ պարունակում է արդեն զլիսավոր եկամբենաները մեր եկոնոմիկայի ընդհանությունը և ներքին որինաչափությունների կոնդրատելյան ըմբռնման, վորը կոնկրետանում է հետազայռում մասնավորապես՝

ա) արտադրողական ուժերի զարգացման ընթացքում պլանային և տարերային տեսդենցներին վերապահած դերի և նշանակության հարցում։

բ) գյուղատնտեսության զարգացման սկզբունքային ուղիների ձևոման գծով և վերջապես՝

դ) պրոլետարական պետության տնտեսական քաղաքականության կոնկրետ ձեռնարկումների մշակման և նրանց կենսագործման ուղիները նշելիս։

Փորձենք հենց այս սիստեմով ել հետեւել Ստ. Կամսարականի ընդհանուր կոնցեպցիայի զարդացման ընթացքին՝ պարզելու համար նրա տնտեսակետների սոցիալ-տնտեսական հիմունքները և այն դաստիարակերերի

*) Հայտատանի գյուղատնտեսության զարգացման ուղիները եջ 15. Ստ. Կամսարական։

ձգմումները, վորոնց պաշտպանությունն անզուգական հետեւղականությամբ իր վրա յեւ վերցրել մեղանում «Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ուղիները» խորագիրը կրող աշխատության հեղինակը:

Վորոնք են Հայաստանի գյուղատնտեսության զարգացման սովորները, ի՞նչ մեթոդներով և վորապիսի ճանապարհով և մեր գյուղատնտեսությունը կանգնելու իր զարգացման ձիչտ սելակի վրա Հայաստանում՝ իրականացնելու նրան առաջադրված խնդիրները: Հայտնի յէ, վոր այս հարցերը մեր գյուղատնտեսության մասնավորապես վերականգնման շրջանն ավարտելուց հետո, ավելի քան յերեւլիցե արտակարգ սրությամբ դրվեցին մեր կուսակցության և Խորհրդային իշխանության առաջ: Այդ տեսակետից անշուշտ ամէն նեին յերկրորդական նշանակություն չունի այն հարցը, թե ինչպես եր գնահատվում մեր գյուղատնտեսության անցած ամբողջ ճանապարհը և ինչ ուղիներ են նշվում նրա զարգացման համար նաև մեր ալանային մարդինների և առաջին հերթին նրա գյուղատնտեսական սեկցիայի ղեկավարության կողմից:

Իր նույն աշխատության մեջ Ստ. Կամսարականը հանրագումարի յենթարկելով մեր գյուղատնտեսության զարգացման գլխավոր տենդենցիները մինչև հեղափոխությունը, յերակացնում ե՝

«Դրանք վորոշակի վկայում են պատերազմից առաջ մեր գյուղատնտեսության կատարած առաջադիմության մասին և նշում են այն ուղղությունը, վորով պետք ե ընթանա հետագայում մեր գյուղատնտեսության զարգացում»*):

*) «Հայաստանի գյուղատնտեսության զարգացման սովորները» հջ 15,

Այսպես ուրեմն նրա կարծիքով մեր գյուղատնտեսության զարգացման նախկին որինաչափությունները մնում են լրիվ իրենց ուժի մեջ նաև պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ շրջանում, կամ ուրիշ խոսքով՝ մեր գյուղատնտեսության բախտը կանխորոշված և արդին զարգացման այն տենդենցիներով, վորոնք տիրապետող եյին նախանեղափական շրջանում: Քաղ. Ստ. Կամսարականն իր այս յեղակացությունն ավելի քան բացորոշ կերպով զարգացնում է մի այլ կապակցությամբ, յերբ փորձում է գնահատել գյուղատնտեսության զարգացման սպայմանները մեզանում՝ գյուղատնտեսության վերականգնման շրջանում:

«Վորոնք են ուրեմն գյուղատնտեսության արդեն սկսված վերածնման սպատճառները: Մենք կարծում ենք, վոր ընդհանուր առմամբ նրանց եյությամբ հայնին են, վորով առաջադիմություն եր կատարում գյուղատնտեսությունը նաև մինչ-պատերազմյան շրջանում, ավելացրած նորտատիրության մեջորդութիւնի և այն ժամանակ գոյություն ունեցող արգելվելիքից մի բանիսի վոշնչացումը, որինակ՝ հողային ուժիմի արմատական փափոխումը»*):

Սակայն, յեթէ գյուղատնտեսության զարգացման ներքին որենքների մեջ վոչ մի փոփոխություն չի առաջացել, յեթէ մեզանում ևս արտադրողական ուժերի զարգացման հիմնական ռեզուլյատուրը շարունակում է մնալ շուկան, առաջ այդ նշանակում և առաջին հերթին, վոր գյուղի ղեփերենցիացիան նույնական պետք և ընթանա նույն ուղիներով և ձեվերով, վորոնցով ընթանում եր այն մինչեւ պրոլետարա-

*) Նույն տեղը, հջ 13:

կան գիլուատուրայի հաստատումը։ Սակայն տաքտիքական նպատակով հեղինակն այս հարցն առհասարակ չի ցանկանում արծարծել։ Ճիշտ և ճիշտ այն պրիոմը, ինչ գործադրել են ժամանակին Ստ. Կամուարականի ալագ ուսուցիչները։

Այսեղ հարկավոր են նշել նաև այն, թե ինչպես լուսաբացնում Ստ. Կամսարականը զյուղատնտեսության նկատմամբ պրոլետարական պետության մարմինների անելիքների և նպատակադրումների բովանդակությունը։

«Գյուղատնտեսության հավանական զարգացումը կարող է շատ կողմերից և խոշոր մանրամանությունաներում չգուգադիպել ցանկալի հետ... Ռւսոի պարզ է, վոր վորքան ել համապատասխան լինեն իրար զյուղատնտեսության զարգացման ցանկալի և հավանական ուղղությունները, զգալի ասպարեզ է մնում (ինչպիսի առատաձենություն, Կ.Վ.) պետության որդաններին՝ զիտակցորեն միջամտելու գյուղատնտեսության զարգացմանը... հավանական դարգացումը ցանկալի ին մոտեցնելու նպատակով, այլ հավանական ուղղությունը ուսցիոնալացնելու նպատակով»*): (Բնդզումն իմն են Կ.Վ.):

Կոմինտարիաները ավելորդ են։ Հիշատակենք միայն, վոր այս տողերը ժամանակաբարական տեսակետից դրվել են հենց այն ժամանակ, յերբ մեր կուսակցությունը մարտական լողունքներ եր առաջադրել վրձութար շուր տալ գյուղի զարգացման ուղին՝ հանրա-

*) Նույն տեղը, էջ 19—20

յին տնտեսության հիմունքներով վերակառուցել դյուզատնտեսությունը, յերբ վերջապես պլանը մեր տնտեսական կյանքում արդեն դարձել եր «համապարփակ, ամենաթափանց մի հիմունք, վորը թափանցում ե մեր ժողովրդական տնտեսությունը նույնիսկ մինչեւ նրա սկզբնական տարրերը՝ առանձին արդյունաբերական ձեռնարկությունը, կոռպերատիվը, կորոնտեսությունը, գյուղացիական առանձին տնտեսությունը» (Ընկ. ընկ. Կրժիմանովսկով և Միլյուտինի կոչից)։

Յեթե ըստ Կամսարականի մեկ և վճռական կողմում գտնվում են ամենաղոր տարերայնությունը, շուրջայական հարաբերությունները և կազիտարիստական տենդենցները, իսկ մյուս կողմում մեր եկոնոմիկայի ոսցիալիստական ելեմենտները՝ վորոնք կարող են ամենաշաղող դեպքում միայն կորեկտիվներ մտցնել տարերային տենդենցների ընթացքի մեջ, առա դարձանալի չե, վոր մեր գյուղատնտեսության զարգացման հեռանկարները վորոշելիս, իր բոլոր գիրեկտիվ դրությունների նախադաշտան ընթացքում Ստ. Կամսարականն ամբողջովին յենում ե գյուղատնտեսության մինչ պատերազման զարգացման պայմաններից։ Նրա դիրեկտիվ դրությունները՝ 1) յերկրի առանձին շրջանների ինտենսիվացումը և ինտենսիվացվելիք շրջանների սահմանների ընդլայնումը, 2) եքստենսիվ գյուղատնտեսության ռացիոնալացումն այն շրջաններում, վորաեղ դրահամար կան համապատասխան բնապատմական և տընտեսական պայմաններ, 3) գյուղատնտեսության ապրանքայինության բարձրացումը, 4) գյուղատնտեսության ինդուստրացումը և այլն»*): ամբողջովին բըդ-

*) «Հայտատանի գյուղատնտեսության զարգացման ուղիները» էջ 48.

իսեցված են այդ հախաչեղափոխական շրջանի գյուղատնտեսության զարգացման ճանապարհով ռեալիզացիայի յէնթարկվելու պայմաններից :

Զափազանց բնական ձևով յելնելով «մինչպատերազմյան» զարգացման պայմաններից, այդ յելակետի հիման վրա առաջարկած դիրեկտիվ խնդիրներից նա իր ծրագրում մատնանշում ե նաև տնտեսական քաղաքականության ձեռնարկումների համապատասխան սիստեմ՝ նրանց կենսագրծման համար :

«Զենարկումների այդ սխառեմը, գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտ տեմպն ապահովելու համար, պետք ե ձգտի՝

1. «Զարգացնել մեր գյուղացիական ազգաբնակչության ինքնազգործությունը և բարձրացնել նրա տնտեսական նախաձեռնությունը, 2. ձգտի կազմակերպելու գյուղացիական մասսաներին և 3. պայմաններ ապահովի գյուղատնտեսության մեջ նյութական արժեքներ կուտակելու համար : *)

Նրագիծը փակված է : Ինչ իսուք, վոր պետք ե քաղաքականապես բոլորովին կույր լինել չունենելու համար, թե մեր գյուղի վոր գասակարդն է իսոսում Ստ. Կամսարականի բերանով : Նույնիսկ «գյուղատրնտեսության ինքնազգործունեյության կազմակերպման ու կոռուցացման» լողունդն այստեղ հանդիսանում է սոսկ տեխնիքական մանյովը, հարմար շղարշ գյուղատնտեսության կոռուցացիայի կապիտալիստական վերասերման համար, քանի վոր նրա միակ նպատակն է

*) «Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ուղիները» էջ 46.

«լրացնել այն բացը», վոր նկատավում է մինչպատերազմյան ցարական Յերևանյան նահանգում դրաբանատընտեսությամբ զբաղվող անհատ տնտեսությունների նյութական բարգավաճումն ապահովելու համար» Ստ. Կամսարականի կոռուցատիվ լլանն ընդդրկում է գյուղական տնտեսությունների սոսկ ապրանքաբանագության հարաբերությունները, հիմնովին ժխտում է գյուղատնտեսության արտադրական վերակառուցումը, լուսմ է գյուղում տիրող զամակարգային հակասությունների և այդ հողի վրա գնալով ավելի սրվող պայքարի մասին :

Այս բոլորը վկայում են միայն մի բան, վոր Ստ. Կամսարականը հետեւելով իր մեծ ուսուցիչների փորձածածկակին, խոսելով «գյուղատնտեսության» և «գյուղացիության» մասին առհասարակ, բատ եյության իր շագրության կենարոնում ունի գյուղի կապիտալիստական դասակարգի շահերն ու ձգութեալ փաստքեն ամենայն հմտությամբ իրականացնում է գյուղատնտեսության կապիտալիստական զարգացման տեսական ու պրակտիկ պաշտպանության գործը :

Բերենք միայն յերկու որինակ՝ վեր հանելու համար Ստ. Կամսարականի տակտիկական այս մակյովը իրկական եյությունը :

ՓԱՄՏ № 1.

Ընդհանրացրած պետք է համարել միլիորատիվ մեր ձեռնարկումների և նրանց սխառեմում մասնավորապես իրիգացիոն աշխատանքների հսկայական գերը՝ մեր գյուղատնտեսության զարգացման նպատակահարմար գյուղատնտեսության զարգացման նպատակահարմար

ուղիներ նշելու և նրա արմատական վերակառուցման գործում :

Մեր խնդիրն է այդ գծով փոք միայն չորսցնել ճառացած տարածությունները, վուոգել անջրդի տափառանները և նոր անսահական դիմք տալ նրանց, այլև միխորատիվ աշխատանքը նոր և հզոր խթան դարձնել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար :

Ինչպես և դետք և սովասել, հիմնովին հակառակ տեսակետ ունի քաղաքացի Ստ. Կամսարականը. Նրա կարծիքով մեր միլիորատիվ ձեռնարկումների յելակեար պիտի լինի «որբարձ հարաբերություն ստեղծել առկա մարդկային աշխատանքի և նրա գործադրման հնարավոր ոբյեկտի՝ մշակելի հողային տարածության միջև, այլ խոսքով՝ մետասահմարդող ազգաբնակչության ապահովումը (ինչ լեզու յե՛, վ. Կ.) հողով և ընդհակառակը» *):

Ահա այն ամենը, վորով Ստ. Կամսարականի կարծիքով պայմանավորվում է մեր միլիորատիվ՝ իրա մեջ նուև իրիդացիոն՝ ձեռնարկումների իրականացումը:

Բայց դատմանք այն հարցին, թե ո՞ւմ ի նկատի ունի Ստ. Կամսարականը, յերբ խոսում է դյուզի «տընտեսավարող» բնակչության մասին :

Իր աշխատության նույն գլխում, ընդամենը միքանի տող հետո, նա հակառակ իր կամքի, հարկադրությած և բանալ բոլոր փակագծերը՝ հրաժարվել մանվածավատ դարձլածքներից և ամոնիջականորեն խոսել արդեն դյուզի այն զասակարգել լիզգով, վորն ի դեպքությունությունից և որենսդրությունից :

«Նախ քան որենք և ապա նրա գործադրման հրահանգներ հրատարակելը, պետք է ուսումնասիրել մեր ամբողջ անցյալն այդ կողմից, զարերի ընթացքում կերտված սովորությունները, փոխհարաբերությունները, իրավունքները, ջրողագործման հաստատված կարգերը։ Առանց այդ ուսումնասիրման մեր որենքները չեն համապատասխանի մեր գյուղատնտեսական կամքին և շատ թյուրիմացություններ ու անախորժություններ կառաջացնեն» :

Ավելի ցայտուն որինակ, թե ինչպես պետք է հանդես գալ պաշտպանելու գյուղի զարավոր շահագործման պայմանները և ստանձնել շահագործող գաստիտրքի փառատարանի դերը՝ դժվար և յերեակայել :

ՓԱՄՏ № 2.

Արտասհմանից կազմակերպվող ներգաղթի քաղաքականության հիմքում մեր կարծիքով դրված են յերկու հիմնական ինդիքներ, վորոնք ամենասերտ կերպով կազմած են իրար հետ, լրացնում են միմյանց։ Առաջին՝ կազմակերպելով իսկական աշխատավորական մասսաների ներգաղթ։ մենք գործնականապես ապացուցում ենք գաղութահայ լայն աշխատավորականմասսաներին, թե ինչպես Հայաստանի բանվորագյուղացիական մտասաները պատրաստ են մեծ դժվարություններ հաղթահարելով՝ ընդառաջել համաշխարհային իմպերիալիզմի և նրանց գաշնակցական լակեյների մեջքով կիսաքաղյականմաններում իր գոյությունը քարշ տվյող աշխատավորական մասսաներին՝ նրանց համար ապրուսի մարդավայել պայմաններ ստեղծելու գործում և յերկրորդ գործնականապես կապել նրանց մեր սոցիալիստականությունից։

կան կյանքի կառուցման աշխատանքներին, վերապաստարակել նրանց այդ նոր կյանքի նիփրված կառուցողի և պաշտպանի վողով։

Այս պայմաններով և միայն, վոր մեր ձեռնարկումները ներգաղթի գծով վոչ միայն կառաջացնեն քաղաքական հսկայական եֆեկտ արտասահմանում, ել ավելի կրաքրացնեն մեր սոցիալիստական հայրենիքի նշանակությունը դադութահայ լայն աշխատավորական մասների աչքում, այլև ներգաղթի մեր ձեռնարկումները լիապես կուտագործվեն նոր հիմնվող գյուղատնտեսական բնակավայրերում՝ սոցիալիստական տնտեսության նոր ամրոցներ ստեղծելու համար։

Վոչ մի խոսք այն մասին, վոր յերկու այս գյուղավոր բնդիքների իրականացման համար վճռակն նշանակություն ունի այն հարցը թե ո՞ւմ ենի լնդունում մեր յերկիրը։

Բայց տեսնենք, թե ինչ է առաջարկում այս տոմիվ քաղ. Կամսարականը։

«Վերաբնակների միջոցների ներկրավումը պետք է կատարվի, ընտրելով վերաբնակներին նրանց մեկնելու վայրում՝ ըստ նրանց նյութական ապահովության և վերջին այն չափով, վորի ի վիճակի կիմի ապահովել վերաբնակներին նոր վայրում տնտեսության ստեղծումը սեփական ուժերով՝ պետության մասնակի ոգությամբ կամ առանց ոգնության»*։

Մեր կարծիքով՝ այս հետքում ևս առանձին կոմինտրիաների կարիք չկա. ըստ յերկույթին հայրենի բնիկ

*.) Նույն տեղ էջ 36,

**) Նույն տեղ էջ 37.

կուլակության դիրքերն ել ավելի ամրացնելու նպատակով՝ Ստ. Կամսարականը ցանկանում է Հայաստան հըրավիրել... գաղութահայ շահագործողներին, կուլակային նոր «ոչախմերի» քիվը բազմացնելու նրանց Հայաստանի գյուղատնտեսության կապիտալիստական ուստավացիայի իր տեսական ծրագրի կենսագործողը դարձնելու համար։

Մենք գետ չավարտեցինք Ստ. Կամսարականի այս աշխատության նույնիսկ համառոտ բնութագիրը։ Մասնավորպես լրագրական հոգվածում զժվար եր ավելի մեծ չափով վեր հանել և դյուղատնտեսական աշխատանքի առանձին բնագավառների ու կուլտուրաների զարգացման որինակների վրա նոր նյութերով ցույց տալ Ստ. Կամսարականի տեսական նորքի և տակտիկական պրիորների ուսեակցիոն եյտթյունը։

Սակայն մեր կարծիքով նույնիսկ այն, վոր մենք միջ բերինք, մեակատար հիմք են տակն մեզ անդելու, վոր հանձին Ստ. Կամսարականի այս աշխատության մեմբ ունենք Հայաստանի գյուղատնտեսության կապիտալիստական զարգացման տեսական և պրակտիկ արշտովանության ամրողջական մի ծրագիր։

Այս պայմաններում քաղաքական զգոնության բացակայությամբ միայն կարելի յե բացարձի այն փասուը, վոր մեր պլանային մարմիններում այդ սև ծրագիրը մինչեւ այսոր ել չի մերկացվել և անհրաժեշտ հակառարված չի ստացել։

ՀՆԴԻՆՄ ԿՈՆԴՐԱՏԵՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ
ՀԱՐՑՈՒՄ

Ընդհանրացած պետք է համարել այն ճշմարտությունը, վոր բուրժուական, մանր բուրժուական և տարբեր տիպի ռեվիզիոնիստական թեորիայի դեմ մղվող պայքարը ներկա ետապում կազմում ե անբաժանելի մասն այն մարտական պայքարի, վոր մղում ե ողբուժարիստը մեր յերկրում հնգամյակը չորս տարում կատարելու և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը ընթացիկ տնտեսական տարում ավարտելու համար :

Սոտավորակես վերջերս հայտնարերված հականեղակոխական կազմակերպությունների որինակը չափազանց ցայտում կերպով մի ավելորդ անդամ վեր հանեց այն իրողությունը, վոր այդ թեորիաների յետելում թափնված և պրոլետարիատի գասակարգային հակառակորդը պրակտիկայում, սոցիալիստական շննարարության անմիջական թշնամին գործնական աշխատանքների պրոցեսում :

Նմանորինակ պայմաններում մարքսիստական մտքի անաղարտությունը թեորիայի բնագավառում, վորը (թեորիան) պետք ե տա մեր պրակտիկներին «կողմուրջման ուժ, հեռանկարի պարզություն, վստահություն, աշխատանքի մեջ, հավատ դեպի մեր դործի հաղթանակը» (Ստալին) գառնում ե, ավելի քան յերբենիցն հոգացողության առարկա՝ սոցիալիստական շննարարության համար գործնականում պայքարիլու շարտական գենք :

«Պայքարը դիտության, ագրարային, փելլասովա-

յական, պատմական, իրավական, գրական և այլ ասպարեզներում ունի մեծաղույն նշանակություն մարքսիստական-լենինյան մտքի զարգացման տեսակետից աջ ոպրտունիզմի և տրոցկիզմի թեորեական և մեթոդուղիմիական արմատները մեկուսացնելու տեսակետից, վերջապես նոր կոչիչած բայլէկվիկյան կադրեր պատրաստելու տեսակետից» : («Պրավդա»-յի Հունվ. 15-ի խմբագրականից) :

Այսպես ե դրված այսոր հականեղակոխական և խորթ իդեոլոգիաների զեմ մղվող պայքարի՝ նրանց հիմնութիւնը ջախճական ջախճական դաստիարակությունները:

Հարցի այսորինակ դրվածքը ներկայումս, յերբ մեծ չափով մերկացված են թշնամի և խորթ իդեոլոգիաների ընդհանուր մեթոդուղիմիական հմտությունները, անհասեցաբար պահանջ և դնում խոչը վուխոխություններ մտցնել նաև նրանց զեմ մղվող պայքարի պորձնական յեղանակների մեջ :

Այս տեսակետից մեղ թվում ե, վոր հականեղակոխական և խորթ իդեոլոգիաների ու պրակտիկայի զեմ մղվող պայքարը, ընդհանուր առմամբ դեկլարատիվ ձեմերով և մեթոդներով պետք ե փոխարինով գերազանցակես նրանց կոնկրետ արտահայտությունների մերկացման, անողոք գատափետման և նրանց ըննադատության կոնկրետ որինակների վրա աշխատավորական լայն մասամբներին դաստիարակելու աշխատանքով :

Այս տեսակետից ըստ յերեվույթին որպամազծորեն հակառակ տեսակետ ունի նորերս հրատարակված Հողագոմատի բրդան «Սոցիալիստական ագրանոմիա» ժուռնալի խմբագրությունը :

Այսպես՝ նա կարծում է, վոր բավական ե համակ-
ված լինել բուրժուական և հակառեղափոքական այլ
իդեոլոգիաների դեմ պայքարելու ցանկությամբ, այդ
ժաման մի քանի դեկլարատիվ հայուարարություններ
անել և ամեն ինչ պատրաստ ե, և արդեն կարելի յն
մասին աղաւազով լինել բոլոր տեսակի թշնամի գաղա-
փարախոսությունների ուժինելի, նրանց ներս սողոս-
կելու վտանգը:

Թե ինչպիսի «անհարմար դրություն և ստեղծն այդ
«ժուածելակերպը» «Սոցիալիստական Աղբոնոմիա»
ժուածալի խմբագրության համար՝ այդ հարցին և վոր
անցնում ենք այժմս:

Վոր մեղանում, Հայաստանում տնտեսական ըը-
ջանացման աշխատանքների մինչ այժմյան պրակտիկան
և նրա տեսական հիմնավորման աշխատանքները մինչև
վերջերս հառուցված են յիշել վոչ մարզսիստական-լե-
նինյան պրեսիսիաներով, վոր նրանք վորոշ ըրջանում
ուղղակի խեղաթյուրվել են մեր գասակարգային թըլ-
նամու «կիտնական» գործակալների կողմից՝ այդ խընդ-
րի վրա մենք մատնանշել ենք արդեն:

Այս ամենը սակայն, մապաչափ օնդմմ. չի կարող
մեղմացնել Հայաստանի շրջանացման աշխատանքների
այն «քննարկատության» վնասակարությունը, վորի
նախաձեռնությունը իք վրա յեւ վերցրել Խ. Ավդալբեկ-
յանը:

Ավելին՝ Մենք այն կարծիքն ունենք, վոր
«Սոցիալիստական Աղբոնոմիա»-ի եջերում Խ.
Ավդալբեկյանի յելույթը ամբողջովին արձագանքում ե

մեր յերկրի թշնամի դասակարգերի պահանջներին,
իր վրա յեւ վերցնում նրա գաղափարախոսության իրաց-
ման պարտավորությունը՝ շրջանացման հարցերում:

Ինչումն ե կայանում Խ. Ավդալբեկյանի յելույթի
ուետկցիոն բնույթը այս հարցում: Շրջանացման պրո-
ցեսի բուրժուական ըմբռնումը, ինչպես առհասարակ
կապկտալիստական յերկրներում, նույնական և ցարա-
կան Ռուսաստանում ամբողջովին հիմնված եր ռայոնի
վորակն տարերայնորեն կազմվող և վորոշ տերիտո-
րիայով սահմանափակ միավորի տեսության վրա:

Ֆորտունատովը և Կնիպովիչը շրջանացման աշ-
խարհառդրական շկոլայի այդ յերկու կարկառուն ներ-
կայացուցիչները, վորոնց գործակալի պատիվը Հա-
յաստանում ուզում է ձեռք բերել Խ. Ավդալբեկյանը՝
իրենց տեսությամբ վոչինչ կամ դրեթե վոչինչ նոր
չեն մտցնում շրջանի բովանդակության բուրժուական
այդ բնորոշման մեջ:

«Շրջան պետք ե անվանել քարտեզի վրա ճշտու-
թյամբ նշանակված և վորեւ հատկանիչով ուրիշներից
տարբերվող յերկրամաս»*): Ահա թե ինչպես և բնո-
րշում ֆորտունատովը շրջանի եյությունը:

Ֆորտունատովից հետո Խ. Ավդալբեկյանն ընդ-
գելով այս բնորոշման «կլասիկ» լինելու հանդաման-
քը, նրա իրականացման պահանջն է լուսում շրջանացման
մեր պրակտիկ քաղաքականության առաջ:

Ծանոթանանք Խ. Ավդալբեկյանի այս մտավոր զե-
զումներին ավելի հանդամանորեն:

Խոներով շրջանի ստեղծման և զարդացման արա-

* Ֆորտունատով «Ռուսաստանի գյուղատնտեսական շը-
շանների հարցը», Քաղաքածք Բ. Ն. Թհողրովիչի «Գյու-
ղատնտեսական շրջանացում» գրքից էջ 18.

մարանական ուղիների մասին մատնաշելով չըջանացածան մեր մինչ այժմյան պրակտիկայում ճիշտ մեթոդով աշխատելու պահասը լի . Ավդաբեկյանը գրում ե՝

«Յեզ այդ պահան ե , վոր պիտք ե լրացնել» բայց —ինչպես , ի՞նչ մեթոդներ ե առաջարկում լի . Ավդաբեկյանը չըջանացման հարցերի անթերի լուծման հարդար :

Իդուր են ընթերցողի հույսերը վորեւ նորություն լսելու համար լի . Ավդաբեկյանից : Նա անդոզ ե վորեւ նոր բան ասել , բացի իր մեծ ուսուցիչների ունակցիոն մտքերը անհաջող կտակակցություններով լրկնելուց :

Բայց այնուամենային լսենք նրան :

«Ծրչան պետք ե անվանել քարտեզի վրա նշուությունը՝ նշանակած և վորեւ հատկանիշով ուրիշներից տարրերվաղ յերկրամասը» . (Ընդդ . Հեղինակինն են) : «Ֆ . Ֆորտունատովի տված այս ֆորմուլայի վերլուծությունը տալուց և այն ընդունելուց հետո Բ . Ն . Կոփառվիչը հետեւյալ լրացումն ե կառարեւմ չըջանիքնորոշման խնդրում , —

«Հատկափները պետք ե լինեն անհրաժեշտ , ինչպես և բավարար տվյալ շրջանի առանձնահատկությունները պարզելու համար : Միաժամանակ հատկանիշները փոխադարձարար կապակցված ու պայմանակիրված դրույան մեջ պետք ե լինեն» : (Ընդդ . Դարձյալ Հեղինակինն են) :

Այս կերպ յեթե Ֆորտունատովիդ հետո լի . Ավդաբեկյանի կարծիքով ևս ուստոնք տերիտորիայի մի մասն ե և բնորոշվում ե «մեկ կամ մի քանի հատկանիշներով» , ապա , ըստ եյտթյան չըջանացման խնդիրն ամբողջովին պարփակվում ե վերջին հաշվով այս կամ այն

տերիտորիայի վրա համանման հատկանիշներ փնտռելու և տվյալ տարածության չըջանում ուսյոնի սահմանները ճշտելու աշխատանքի մեջ :

Նման սկզբունքներվ ուսյոնացումը իր եյտթյամբ վոչնչով չի տարբերվում այն ամենից , ինչ Սրեկմայան Յելբոպայում այսոր ել հայտնի յե «աշխարհապետական մեկուսացման «լոկալիդացիայի տեսություն» անունով :

